«ԴՈՒՈ» ԵՎ «ՏՐԻՈ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. **Համաձայն սույն պայմանների «Դուո» ծառայությունների փաթեթը տրամադրվում է համաձայն սույն պայմանների 5-րդ կետով սահմանված բացառման:**

«Դուո» ծառայությունների փաթեթը բաղկացած է «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթից:

1.1. Բաժանորդագրվելով «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթին 1 (մեկ) տարով՝

1.1.1. Բաժանորդը պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 տարի (365 օր) շարունակ օգտվել «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթից և Wi-Fi Սարքի (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) օգտագործման իրավունքը ներառվում է «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթում (Wi-Fi Սարքը (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) տրամադրվում է առանց վճարի գանձման):

1.1.2. Բաժանորդը ստանում է իր սակագնային փաթեթի պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական արագության համեմատ կրկնակի ավելի բարձր արագություն պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 (տարի (365 օր) շարունակ (եթե Բաժանորդը օգտվում է «Հավելյալ արագություն» ծառայությունից, ապա կրկնապատկվում է «Դուո» ծառայությունների փաթեթի հիմնական պայմաններով սահմանված ինտերնետի արագությունը, իսկ արդեն իսկ ակտիվացված «Հավելյալ արագություն» ծառայության շրջանակներում տրամադրվող արագությունը գումարվում է «Դուո» ծառայությունների փաթեթի շրջանակներում կրկնապատկված արագությանը):

1.1.3. Սակագնային փաթեթում ներառվում է «Հավելյալ 10» և «Ժամանց 10» հեռուստաալիքների փաթեթները պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի (365 օր) շարունակ:

1.1.4. Բաժանորդը ստանում է 100% զեղչ առաջին ամսվա ամսավճարի համար, այսինքն՝ տվյալ սակագնային փաթեթով նախատեսված հիմնական Ծառայություններն առաջին ամսվա ընթացքում տրամադրվում են առանց վճարի գանձման[1],

1.2. Wi-Fi Սարքի օգտագործման իրավունքը Բաժանորդի համար պահպանվում է նաև «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթին 1 տարով բաժանորդագրության պայմաններով սահմանված պարտադիր ժամկետի ավարտից հետո, եթե Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված Պայմանագիրը մնում է ուժի մեջ, և Wi-Fi Սարքը անհրաժեշտ է Բաժանորդին Ծառայություններ մատուցելու համար: Օպերատորի և Բաժանորդի միջև Պայմանագրի դադարեցման (միակողմանի կամ երկկողմանի) դեպքում Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

1.3. Եթե Բաժանորդը սույն պայմանների կետ 1-ով սահմանված կարգով միացել է Ծառայություններին և Ծառայությունների՝ անվճար տրամադրման ժամանակահատվածում ժամանակավորապես կասեցնում է Ծառայությունները, ապա Ծառայությունների՝ անվճար տրամադրման ժամանակահատվածը չի երկարաձգվում կասեցված ժամանակահատվածի տևողությամբ:

1.4. Եթե Բաժանորդը սույն պայմանների 1.1.2. կետում նշված կարգով ստացել է ինտերնետի կրկնակի արագացում և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի կամ «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի, ապա շարունակում է օգտվել ինտերնետի կրկնակի արագությունից մինչև դրա համար նախկին սակագնային փաթեթով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև ինտերնետի կրկնապատկված արագության գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների 1.1.2. կետով տրամադրված ինտերնետի կրկնապատիկ արագության պայմանը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:

1.5. Եթե Բաժանորդը սույն պայմանների 1.1.3. կետում նշված կարգով ստացել է «Հավելյալ 10» և «Ժամանց 10» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթները և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային

[1] Սույն կետի իմաստով անվճար ամիս է համարվում ծառայությունների ակտիվացման օրվանից սկսած մինչև հաջորդող ամսվա նույն օրը ընկած ժամանակահատվածը: Սույն կետով սահմանված պայմանը գործում է բացառապես նոր բաժանորդների համար:

փաթեթի, ապա շարունակում է օգտվել «Հավելյալ 10» և «Ժամանց 10» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթներից մինչև դրանց համար նախկին սակագնային փաթեթով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև «Հավելյալ 10» և «Ժամանց 10» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթների տրամադրման գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների 1.1.3. կետով տրամադրված «Հավելյալ 10» և «Ժամանց 10» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթների տրամադրման պայմանը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:

1.6. Եթե Բաժանորդը միացել է սույն պայմաններով սահմանված կարգով և Ծառայությունների անվճար տրամադրման ժամանակահատվածում կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «Մոնո» սակագնային փաթեթին կամ «Տրիո» ծառայությունների փաթեթին ապա շարունակում է անվճար օգտվել նոր սակագնային փաթեթով տրամադրվող Ծառայություններից մինչև դրանց անվճար տրամադրման համար ի սկզբանե սահմանված ժամանակահատվածի ավարտը՝ անկախ նոր սակագնային փաթեթի ամսավճարի չափից:

1.7. Եթե Բաժանորդը միացել է սույն պայմաններով սահմանված կարգով և Ծառայությունների անվճար տրամադրման ժամանակահատվածում վերակնքում է Բաժանորդային պայմանագիրը «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթի, «Մոնո» սակագնային փաթեթի կամ «Տրիո» ծառայությունների փաթեթի շրջանակներում, ապա շարունակում է անվճար օգտվել նոր սակագնային փաթեթով տրամադրվող Ծառայություններից մինչև դրանց անվճար տրամադրման համար ի սկզբանե սահմանված ժամանակահատվածի ավարտը՝ անկախ նոր սակագնային փաթեթի ամսավճարի չափից:

1.8. «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթին բաժանորդագրության դեպքում պայմաններով սահմանված կարգով Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում սակագնային փաթեթին բաժանորդագրության ժամկետը երկարում է Ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ, սակայն չի երկարում սույն պայմանների կետ 1.1.-ով տրամադրվող առավելությունները:

1.9. «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդն օգտվել է մատուցված Ծառայություններից դրանց ակտիվացման օրվանից սկսած առնվազն 365 օրվա ընթացքում:

1.10. Եթե «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթին բաժանորդագրությունը դադարեցվում է Բաժանորդի դիմումի հիմա վրա կամ Օպերատորի նախաձեռնությամբ՝ Բաժանորդի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման հիմքով, մինչև սահմանված պարտադիր ժամկետի ավարտը, ապա Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ վճարել ընթացիկ պարտքը և տուգանք 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով: Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագրից միակողմանի հրաժարման դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդային պայմանագրի լուծում կատարվում է բացառապես Բաժանորդի կողմից մինչև Բաժանորդային պայմանագրի լուծման (դադարեցման) օրը իրեն մատուցված Ծառայությունների արժեքի, ներառյալ ամսական բաժանորդային վճարի, ինչպես նաև Բաժանորդային պայմանագրի միակողմանի լուծման համար Օպերատորի կողմից նախատեսված այլ վճարումների (տույժերը, տուգանքները, հրաժարագին), եթե այդպիսիք առկա են, իրականացման դեպքում:

2. Համաձայն սույն պայմանների «Տրիո» ծառայությունների փաթեթը տրամադրվում է համաձայն սույն պայմանների 5-րդ կետով սահմանված բացառման:

2.1. Բաժանորդագրվելով «Տրիո» ծառայությունների փաթեթին 1 տարով՝ Բաժանորդը պարտավորվում է Ծառայության ակտիվացման օրվանից 1 տարի (365 օր) շարունակ օգտվել «Տրիո» ծառայությունների փաթեթից:

2.1.1. 1 տարով բաժանորդագրության դեպքում՝ Wi-Fi Սարքի (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) օգտագործման իրավունքը ներառվում է «Տրիո» ծառայությունների փաթեթում (Wi-Fi Սարքը (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) տրամադրվում է առանց վճարի գանձման)

2.1.2. Բաժանորդը ստանում է իր սակագնային փաթեթի պայմաններով սահմանված ինտերնետի հիմնական արագության համեմատ կրկնակի ավելի բարձր արագություն պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի (365 օր) շարունակ (եթե Բաժանորդը օգտվում է «Հավելյալ արագություն» ծառայությունից, ապա կրկնապատկվում է «Տրիո» ծառայությունների փաթեթի հիմնական պայմաններով սահմանված ինտերնետի արագությունը, իսկ արդեն իսկ ակտիվացված «Հավելյալ արագություն» ծառայության

շրջանակներում տրամադրվող արագությունը գումարվում է «Տրիո» ծառայությունների փաթեթի շրջանակներում կրկնապատկված արագությանը):

2.1.3. Սակագնային փաթեթում ներառվում է «Հատուկ 30» հեռուստաալիքների փաթեթը պարտադիր տարեկան բաժանորդագրությամբ Ծառայությունների ակտիվացման պահից սկսած 1 տարի (365 օր) շարունակ:

2.1.4. Բաժանորդը ստանում է 100% զեղչ առաջին ամսվա ամսավճարի համար, այսինքն՝ տվյալ սակագնային փաթեթով նախատեսված հիմնական Ծառայություններն առաջին ամսվա ընթացքում տրամադրվում են առանց վճարի գանձման[2],

2.2. Wi-Fi Սարքի օգտագործման իրավունքը Բաժանորդի համար պահպանվում է նաև «Տրիո» ծառայությունների փաթեթին 1 տարով բաժանորդագրության պայմաններով սահմանված պարտադիր ժամկետի ավարտից հետո, եթե Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված Պայմանագիրը մնում է ուժի մեջ, և Wi-Fi Սարքը անհրաժեշտ է Բաժանորդին Ծառայություններ մատուցելու համար: Օպերատորի և Բաժանորդի միջև Պայմանագրի դադարեցման դեպքում (միակողմանի կամ երկկողմանի) Wi-Fi Սարքը ենթակա է վերադարձման Օպերատորին:

2.3. Եթե Բաժանորդը սույն պայմանների կետ 1-ով սահմանված կարգով միացել է Ծառայություններին և Ծառայությունների՝ անվճար տրամադրման ժամանակահատվածում ժամանակավորապես կասեցնում է Ծառայությունները, ապա Ծառայությունների՝ անվճար տրամադրման ժամանակահատվածը չի երկարաձգվում կասեցված ժամանակահատվածի տևողությամբ:

2.4. Եթե Բաժանորդը սույն պայմանների 2.1.2. կետում նշված կարգով ստացել է ինտերնետի կրկնակի արագացում և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Տրիո» ծառայությունների փաթեթի մեկ այլ սակագնային փաթեթի, «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթին կամ «Մոնո» սակագնային փաթեթի որևէ սակագնի, ապա շարունակում է օգտվել ինտերնետի կրկնակի արագությունից մինչև դրա համար նախկին սակագնային փաթեթով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնի/սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև ինտերնետի կրկնապատկված արագության գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների 2.1.2. կետով տրամադրված կրկնակի արագացումը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:

2.5. Եթե Բաժանորդը սույն պայմանների 2.1.3. կետում նշված կարգով ստացել է «Հատուկ 30» հեռուստաալիքների փաթեթ և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն (չդադարեցնելով տարեկան բաժանորդագրության պայմանը)՝ անցում կատարելով «Տրիո» ծառայությունների փաթեթի մեկ այլ սակագնային փաթեթի կամ «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթին, ապա շարունակում է օգտվել «Հատուկ 30» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթից մինչև դրա համար նախկին սակագնային փաթեթով սահմանված վերջնաժամկետի ավարտը, եթե նոր սակագնային փաթեթի ամսավճարը առնվազն նախկին սակագնային փաթեթի ամսավճարի չափ է, և անցումը կատարվում է մինչև «Հատուկ 30» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթի տրամադրման գործողության վերջնաժամկետի ավարտը: Յուրաքանչյուր այլ տեսակի սակագնային փաթեթի փոփոխություն կատարելու դեպքում սույն պայմանների 2.1.3. կետով տրամադրված «Հատուկ 30» հեռուստաալիքների թեմատիկ փաթեթը դադարում է գործել նոր սակագնային փաթեթի շրջանակում:

2.6. Եթե Բաժանորդը միացել է սույն պայմաններով սահմանված կարգով և Ծառայությունների անվճար տրամադրման ժամանակահատվածում կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթին, «Մոնո» սակագնային փաթեթին կամ «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի ապա շարունակում է անվճար օգտվել նոր սակագնային փաթեթով տրամադրվող Ծառայություններից մինչև դրանց անվճար տրամադրման համար ի սկզբանե սահմանված ժամանակահատվածի ավարտը՝ անկախ նոր սակագնային փաթեթի ամսավճարի չափից:

2.7. Եթե Բաժանորդը միացել է սույն պայմաններով սահմանված կարգով և Ծառայությունների անվճար տրամադրման ժամանակահատվածում վերակնքում է Բաժանորդային պայմանագիրը «Դուո Կոմֆորտ» սակագնային փաթեթի, «Մոնո» սակագնային փաթեթի կամ «Տրիո» ծառայությունների փաթեթի որևէ սակագնային փաթեթի շրջանակներում, ապա շարունակում է անվճար օգտվել նոր սակագնային փաթեթով տրամադրվող Ծառայություններից մինչև դրանց անվճար

[2] Սույն կետի իմաստով անվճար ամիս է համարվում ծառայությունների ակտիվացման օրվանից սկսած մինչև հաջորդող ամսվա նույն օրը ընկած ժամանակահատվածը: Սույն կետով սահմանված պայմանը գործում է բացառապես նոր բաժանորդների համար:

տրամադրման համար ի սկզբանե սահմանված ժամանակահատվածի ավարտը՝ անկախ նոր սակագնային փաթեթի ամսավճարի չափից:

2.8. «Տրիո» Ծառայությունների փաթեթին բաժանորդագրության դեպքում պայմաններով սահմանված կարգով Ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով Ծառայությունների մատուցման կասեցման դեպքում սակագնային փաթեթին բաժանորդագրության ժամկետը երկարում է Ծառայությունների մատուցման կասեցված ժամանակահատվածի տևողությամբ, սակայն չի երկարում սույն պայմանների կետ 2.1.-ով տրամադրվող առավելությունները:

2.9. «Տրիո» ծառայությունների փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե Բաժանորդն օգտվել է մատուցված Ծառայություններից դրանց ակտիվացման օրվանից սկսած առնվազն 365 օրվա ընթացքում:

2.10. Եթե «Տրիո» ծառայությունների փաթեթին բաժանորդագրությունը դադարեցվում է Բաժանորդի դիմումի հիմա վրա կամ Օպերատորի նախաձեռնությամբ՝ Բաժանորդի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման հիմքով, մինչև սահմանված պարտադիր ժամկետի ավարտը, ապա Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ վճարել ընթացիկ պարտքը և տուգանք 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամի չափով: Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագրից միակողմանի հրաժարման դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդային պայմանագրի լուծում կատարվում է բացառապես Բաժանորդի կողմից մինչև Բաժանորդային պայմանագրի լուծման (դադարեցման) օրը իրեն մատուցված Ծառայությունների արժեքի, ներառյալ ամսական բաժանորդային վճարի, ինչպես նաև Բաժանորդային պայմանագրի միակողմանի լուծման համար Օպերատորի կողմից նախատեսված այլ վճարումների (տույժերը, տուգանքները, հրաժարագին), եթե այդպիսիք առկա են, իրականացման դեպքում:

3. Սույն պայմաններով սահմանված կարգով Ծառայություններն անվճար չեն տրամադրվում գործող Բաժանորդների կողմից պայմանագրի վերակնքման դեպքում:

4. Սույն պայմանների շրջանակում անվճար չեն տրամադրվոմ Բաժանորդի կողմից ակտիվացված հավելյալ ծառայությունները:

5. Սույն պայմանները գործում են բացառապես այն ֆիզիկական անձ բաժանորդների համար, ովքեր միացել են «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ և «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ կողմից համատեղ մատուցվող **«Դուո Կոմֆորտ»** և **«Տրիո»** Ծառայությունների փաթեթներին «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ- ը և գործընկեր անհատ ձեռնարկատերերի միջև կնքված R հերթական համարներով թվագրվող ծառայությունների մատուցման պայմանագրերի շրջանակներում: